

ԵԶ ՄԻ ԺԱԿԱՀԱԱԿԱԲ ՀԱՅ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՊԱՏՈՒՄ

ԵՒ

ՌՈՒՍԱՀԱՅ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՐԱՒՈՒՄԸ

Խրիմեանի Կարողիկոսութեան և Օրմանեանի Պատրիարքութեան ընդունից ուստ պետարիւնը գրաւեց էջմիածնի և առհասարակ Ռուսանաց եկեղեցական կայուածները:

Ի՞նչ էր բուն և ներին պատճառը այս բանքարումին, ուստ կառավարութիւնը ի՞նչ կերպով զործարեց գրաւումին օրենքը, Հայութիւնը ի՞նչ բողոքներ եւ ի՞նչ դիմուդուրիւններ ըրաւ իր Եկեղեցւոյն ու Ազգին իրաւունքները պաշտպանելու համար, և թէ վերջապէս, եկամ տարուած գրաւումէ մը եսքը, ի՞նչպէս վերահասաւասուեցան Հայոց Եկեղեցւոյ իրաւունքները:

Այս բոլոր նեսաբրական դէպէնը ու խնդիրներ ամփոփ բայց լման պատմագրուած են Օրմանեանի գրչով, իր Ա.Զ.Ա.Պ.Ա.ՏՈՒՄԻՒՆ մէջ:

Եւ մենք շատ բարեպատճի կը համարինք Սիմենի մէջ արտասպել Ա.Զ.Ա.Պ.Ա.ՏՈՒՄԻՒՆ այդ համուածները, իրենց բոլորովին այժմէութեան պատճառաւ: Վասն զի Սիմենի ընթեցողները պիտի տեսնեն թէ շատ մօժիկ անցեալի մը մէջ, Չարերու Ռուսիան, իր բոլոր անոնց ու զօրութեամբ ի՞նչպէս տեղի տուած Հայ ժողովուրդին օրինաւոր բողոքներուն եւ նույրական իրաւունքին առցւ, և թէ արդի Խորհրդային Ռուսիա, ինչպէս նաև Խորհրդային Հայաստան, ի՞նչ դասեր պիտի կրնան սորվի այս շատ մօժիկ անցեալի պատմութենէն:

Վասն եմք որ ոչ միայն նեսաբրութեամբ պիտի կարդացուին Ա.Զ.Ա.Պ.Ա.ՏՈՒՄԻՒՆ այս էջերը, այլ նաև պիտի ըմբռչինուին խորոնկ հանոյնով մը: Վասն զի Հայ ժողովուրդի միաձող կամին ու իրաւունքին յաղթահակովն է որ կը կնօտի այդ գրաւունքներուն պատմութիւնը:

Ա Զ Գ Ա Պ Ա Տ Ո Ւ Մ Ա Ն Ա Ն

Արտասպուած այս էջեր նաև զարդարած մը կուտան Սիմենի ընթեցողներուն, թէ Օրմանեան Մրազան ի՞նչ ոնոն և ի՞նչ ոգիով գրած է մեր ժամանակներու ազգային-եկեղեցական պատմութիւնը, իր Ա.Զ.Ա.Պ.Ա.ՏՈՒՄԻՒՆ այս Վերջին Մասին մէջ, որոն սպազրութիւնը գրեթէ նասած է 100րդ մօմային:

Բայն նեղինակին գրչին եկած մասը պիտի ըլլայ 120—125 մօմա:

Սանց վրայ պէտք է աւելցնել Բոլովանդակութեան, Մատենագրութեան և Յատուկ Անուանց Յանկերը, եւալին:

Ա.Զ.Ա.Պ.Ա.ՏՈՒՄԻՒՆ սկիզբը պիտի զարդարուի Նուպար Փաւային, Պողոս Նուպար Փաւային և Օրմանեան Մրազանին պատկերներով:

Ա.Զ.Ա.Պ.Ա.ՏՈՒՄԻՒՆ կը սպազրուի ՀԱ.Զ.Ա.Պ օրինակ միայն: Ապապրամները կանխիկ են: Այժմ Մէկ ԵԳԻՊԱԿՈՒՆ ՈՍԿԻ կամ Ա.ՄԵՐԻԿԵԱՆ ՀԻՆԳ ՏՈՒ.Ա.Պ: Սպազրութենէն և նրանարակութենէն եսքը պիտի աւելնայ զինը:

ՌՈՒՍԱՀԱՅ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՈՒ ԳՐԱՒՈՒՄԸ

ԳՐԵՑ՝ ✽ ՄԱՂԱՔԻ ԱՐՔԵՏՈՒ ՕՐՄԱՆԵԱՆ

Ա.

կուսակցական շարժումներ իրենց նորիսութեաքն պարզապէս Տաճկահայոց կացութեամբ զրադենուն և հակատաճկային ուղղութիւն ունենալուն, ուստական կառավարութեան անպատճեն չերեցան, և մինչեւ աստիճան մը լաերեայն և անուղղութիւն քաջուկերութիւն ալ գտան: Սակայն իրենց շարունակութեան մէջ ընդունակութիւն ունեցան, տաճկահայականը ընդհանուր հայկականի կերպարան առու, Թուսահայոց վիճակն ալ տագնապալի և զարմանելի երեցաւ, Թուսիոյ ունակութարժութիւն հետ չփուեցաւ, և անոր հետ միացած ու անկէ որդեգրուուծ կործուեցաւ, և հայութիւնը, հայութեան բորորութիւնը, հայութեան ապագան, ուստական մատղորութիւնն ալ զրաւեցին, և այսպէս բոլորսին կերպարանափախուեցան ուստական կառավարութեան և Թուսահայոց հանրութեան յարաբերութիւնները. նախ կոռկած, կառկածէ զգուշութիւն, և զգուշութեան խստութիւն, խստութեանէ բացառութիւն, բացառութեանէ հարածանք Թուսահայոց վրայ ալ ծանրանալ սկսան: Շատանց Թուսաց կառավարութիւնը մտադրութիւն զարձուցած էր Հայոց զպրոցներուն վրայ, որոնք Մակարի ընտրութեանէն առաջ անգամ մըն ալ փակուեցան (§ 2886 ա.): Էր Մակարի օրով վերաբացուեցան (§ 2926), բայց միշտ կասկածուտ վերաբերումը չվերցուեցաւ հաստրութեան և զիմաւորապէս զպրոցները վրայէն: Խնզիրը վերանորոգուեցաւ 1897 յունիս 2'ին, և անոր վրայ նոր օրէնք մը հառարակուեցաւ 1898 մարտ 26'ին ոչ միայն զպրոցները այլև զպրոցական կալուածները կառավարական հսկողութեան ներքեւ տանելու, որ բառական տագնապեցուց Խրիմեանի կոթողիկոսութիւնը, բայց և Մայրաթօռը յաջողեցաւ զատարանական վառողացանեկութիւն թէ կալուածները ուրիշաւո՞ւ էն էքը ու ուրիշաւո՞ւ ու ներ ուրիշաւո՞ւ, ուշ էնէքնէնէնէն և լւանէրէն (ԹէՊ. 10): Կովկասի կառավարչուպես իշխան Գայֆիրն, որ կարծէս յատկու-

պէս Հայերը զսպելու հրահանգով այդ պաշտօնին կոչուած էր, երբ առաջին միջոցը խորհանուեցաւ, ուղղակի հկեղեցական կարուածները կուռավարութեան ձեռքն անցունելու առաջարկը կազմեց, որ առաջին տեսաւթեամբ խիստ երեցաւ նախարարներէն ումանց, իրր զի հայութիւն ուրիշ էր ուսուցածէն, և մասնաւոր հսկողութեան կերպը մտածուեցաւ: Նոր ծրագիրը մը կազմուեցաւ նպատակը ունենալով իրէն հայութիւն հայեան բնիւն և բնիւն էնէն ու ուրիշ բնիւն ու ուրիշ բնիւն, և յատուկ քննութեան ենթարկուեցաւ, որ նախադասեց անհանգիւն հայութիւն և էնէն նիւթաբարութիւն, և հաստատել էր էնէն վերահսկութիւնները, և հաստատել էր էնէն վերահսկութիւնները: Այս կառավարչապետը միշտ իր առաջին առաջարկին վրայ կը պնդէր, և ներքին գործոց նախարարութեան յանձնուեցաւ անոր հետ խորհրդակցին և որոշման մը յանդիլ, որ թէպէտ երկուքին մէջ զոյցաւ, բայց 1901 յուլիս 26'ին զարձեալ ամբողջական նախարարութեան յանձնուեցաւ անոր էնէն ուրիշ բնիւններէ ետքը, վերջապէս 1903 յունիսիւն հայութիւն հայութիւն և էնէն նիւթաբարութիւնները, և բառական երկար խորհրդակցութիւններէ ետքը, վերջապէս 1903 յունիսիւն հայութիւններէ ետքը, վերջապէս 1904 յունիսիւն հայութիւններէ ետքը, և կովկասի մէջ իրր բօթարկը զոյց մը հնչեց պատասխական հեռագիրը, թէ շատ բայց բայց նույն հայութիւններէ ետքը, և էնէն նիւթաբարութիւններէ ուրիշ օրէնքը կը արամադրէր. 1. Թուսահայութիւնի և Կովկասի Հայ եկեղեցիներու և վանքերու և զպրոցներու և ուրիշ հոգեոր հաստատութիւններու բոլոր կալուածներուն մատակարարական վարչութիւնը յանձնել երկրագործութեան և պետական կալուած-

Ներու նախարարութեան, իրաց առևալ հասաւարութեանց շէնքերը, եկեղեցի, վանք, վարժարան, առաջնորդարան, գերեզմաննոց, և անոնց շուրջը գանուզ երեք արտավարի չափ գետիններ, որոնք օտարի չեն փորձուիր: 2. Նոյն մատակարարութեան ենթարկել առկել ետքը ստացուելիք կալուածները: 3. Կարուածներէ արդիւնաւորուած հասոյթները և տոկոսներէ գանձուած զումարները յանձնել ներքին գործոց նախարարութեան: 4. Բոլոր հասոյթներէ 10% պատել մատակարարութեան ծախքերու և կալուածոց նորոգութեան համար, և 5% պահանափ զրամագլուխ կազմելու համար, և մասցեալով հոգալ եկեղեցիներու ու վանքերու ու հոգեւորականներու պէտքերը: 5. Հանրային կրթութեան նախարարութեան յանձնել դպրոցներու պահպանութեան ուրուած գումարները: 6. Ներքին գործոց նախարարութեան իրաւունք տալ մատակարարակոն կանոններ հաստատելու, համարատութեան ձեւեր որոշելու, և ամէն պատահական խնդիր լուծելու և գործադրելու: 7. Օրէնքը նոր զրութիւնը կը պարզէր և կը վճռէր ուսուուել Հայութաւուշներուն եկեղեց ուսուուելուն իւսուածունելու և ուսուածունելի և ուսուածունելի քը: (ԹէՊ. 16-19), և կը յայտարարէր թէ այժմեան մատակարարութիւնը չէ հաւասարական ու պետական իշխանութելի և ու իշխանութելու բառուն պահանափ զրամագլուխի զրութեան իրեւու միջոց բոլոր եկեղեցիները հաւասարական նոգարու, մինչ այժմ, կ'ըսէր, շուրջ իշխանութելու որ մէջնութելը շուրջութելը անյան էն, և իշխանութել հայեաւուրաքանչելուն ստկաւ պահանուած է (ԹէՊ. 14): Թէպէտ օրէնքին հրատարակութիւնը 1903 յունիս 12'ին լրսուցաւ, սակայն դժ մէջնութել ու իշխանութել պահանափ հրատարակուեցաւ յուլիսի կեսին (ԹէՊ. 16): Իսկ Փալիցին որ այդ նպատակակի հօթք ամփաներ Պետրոսիր մասցած էր (ԹէՊ. 10), զործը աւորակէն ետքը յոդթական ձեւով Տփղիս դարձու, և անմիջապէս քուշնէ հրատարակութիւնը ու պահանութեան ու իշխանութեան (ԹէՊ. 19): Խուսական կոստավորութեան այդ նոր ձեւնարկին հիմք կը կազմէր այն համոզումը, թէ Հայ իշխութեաւուն է հայութեան ուրեմնը և այլ իշխութեան անունը է հայութեան լուրջ-հա-

յանձնուած պէտքանշուած, և թէ այն ուրեմնէ ուսուուել ուրաք և ուրաք հայութեան քուշնէն (ԹէՊ. 24): Այսպէս Հայութ և Հայուստանի իշխան երկու կայսրութիւններ համամիտ կը գանուեկն վերագրելու հայուն այն կարեւորութիւնը զոր նա չունէր, և կուսակցական գործիչներուն վրայ մէծ կարողութիւն և հարտար զործունէութիւն մը կ'երիւակայէին, որ չատ հետու էր իրականութենէ:

Բ.

ԴԻՍԱԴՐՈՒԹԵԱՆ ՍԿԻՖԸ

Իրաւացի էր Հայերուն վրայ ազգած խոր ապաւորութիւնը և միաքերու չուտումը զի 1836'ի պարօտէնիքն բացարձակ կերպով կ'ապահովէր եկեղեցական կալուածոց մատակարարութիւնը նոյն իսկ եկեղեցիներուն (ՊՕ. 22), և վանական կալուածոց մատակարարութիւնը վանքերուն պատկանիլը (ՊՕ. 18): Պօրօտէնիքի օրէնքն ալ կաթողիկոսարանի հետ համաձայնութեամբ կազմուած էր (§ 2520). Իսկ ոյժմ թէ պօրօտէնիքն հիմնապէս կը փոխուէր, և թէ կաթողիկոսարանի հետ բանակցութիւն եւ զած չէր: Յուլիսին կէսէն եշմիածին ստացած էր օրէնքի ամրողջութիւնը կառավարչապետի պաշտօնագիրով, թէպէտ յունիսի կիսին տուած էր լուրը, և լուրին վրայ յունիս 20'ին Ազեբասնգրաւոլ ճշմարիտ հայութագաքը առաջին եղած էր կաթողիկոսին զիմելու, որ եկեղեցւոյ հնաւուող և պաշտօնապէտ պահպան լուրը, թէկտղելով միանգամայն պատշաճ գիմադրութիւնն ընել, նկատելով որ նոր օրէնքը թէ եկեղեցւոյ իրուանց եղծի էր և թէ եկեղեցւոյ պաշտօնաներուն անորգական (ԹէՊ. 81): Մայրաթուոյ միաբանութեան կողմէն ալ յուլիս 30'ին բողոքի և զիմազգութեան յայտարարութիւն ներկայուած էր հզածին զէմ (ԹէՊ. 129): Նոյնը կ'ընէր օգոստոս 3'ին երեւանի քաղաքնու վրիմակէն հաւաքուած հոծ բաղմութիւնը մը տառչնորդ Առւքիս և պիտիուապոսի զիմազգութեամբ (ԹէՊ. 83) Վազգարշապատի մէջ (ԹէՊ. 63): Իսկ երիւանուն որ զինքն թուրքիոյ հալածանքնե-

բէն ազատած կործելով մուսայ ծանրաւ գոյն հալածանքին հանդիպած և շռարած էր, առ ժամա կը զոհանար նոր օրէնքը Մայրաթուոյ կողմէն հրատարակութեան չտալով և վիճակներու չհաղորդելով, մինչեւ որ զործը որոշ ձեւ մը առնէր: Իսկ Գուլիցին շառ և էրուու զործելու հետամուռ (ՓէՊ. 33), խիստ հրամաններ կը հասցնէր ուղղակի եկեղեցպաններու, վանահայրներու, տռաշնորդներու և փոխանորդներու սատիկաններու միջոցով, և խազախ հեծեաներու և խլում զիւղապահներու ջոկաններով: զի կը կարծէր և պետական շրջանակներու աշխատանացուցած էր, թէ կաթողիկոսը ձեր ու տկար է և շատով կը համակերպի, ժողովուրդն ալ իւր եկեղեցականներէն զզուած է և ուրախութեամբ կ'ընդունի (ՓէՊ. 34). բայց ճիշդ անոնցմէ կը սկսէր զիմագրութիւնը: Կոթողիկոսը ընկնելու համար ուղղակի Պէկիլէ հետազիր կը համանէր օգոստոս 3'ին, օրէնքը անյազաղ զործագրելու և ծանր հետեւանքներու տաթիթ չտալու (ՓէՊ. 43): Իսկ Արքմենան կը պատասխանէր օգոստոս 6'ին թէ զործը կրնար աբուզ հայ էլեւ վեց համար անշահաւաւէ ճեղքեանին հայութ, ուստի սինոդական զիմումը ընել որոշուած էր, բայց պրոկուրորին չներելուն համար, ոյժմ նախարարութիւնէն կը խնդրէ ճանաւուածութեւ յետքէ լուրջ ու ուժուած է առաջաւանքը (ՓէՊ. 44), և նախարարէն պատասխանը ուշանալուն վրայ օգոստոս 10'ին ուղղակի կայսեր կը հետազիրէր, ուելցնելով բացարութիւնները և մատուցաները պարագան: Ասոր վրայ 12'ին Պէկիլէ կը պատասխանէր թէ յստագումի և կայսեր ներկայանալու առաջարկները մերժուած են (ՓէՊ. 45), և բացարական խիստ զրութիւն մըն ալ կը յզէր, թէ այդ առաջին չշաբան վէ ենթանէ իւրուիսու իւրուից, և թէ իւրեն հրամայուած է յնաշնուն յնելութիւնը թէ առաջարկներէն հայ էնթանուած ու բարձրաց առաջարկները մերժուած են (ՓէՊ. 46): Արքմենան բաւական ոգեւորուած էր զանազան կողմերէ յայտնուած յորդորներով, որոց կը ձայնակցէր Եւրոպայի դաշնակցական կեդրոնէն բղամած կոչ մը, թէպէտ քիչ մը պառաստիսս ոճով զրուած (ՓէՊ. 76-78), և ոյլ եւս յայտնի գիմագրութեան սրոշումը տը-

ւած էր, զի օգոստոս 4'ին պաշտօնական կոնդակով սինոդին կը հրամայէր օրէնքը չհրատարակել և զործը սահմանափակել ու պէտք եղած հնի վաւերագիրները պատրաստել (ՓէՊ. 36 և 83), և օգոստոս 7'ին նոյն ուղղութեամբ ընդարձակ պատասխան մը զրեց կ. Պոլոյ պատրիարքին, նոր վաւերագիրներու պատճեններն ալ յարակցելով, խիր ուղղութիւնը զծելով, և թեմականներն ու վանահայրները ու փոխանորդները հաւմագումար ժողովի հրամայէր ոչ մի կերպով նոր օրէնքին զործագրութեան մասնակից գըտնուիլ (ՓէՊ. 82-84): Միանգամբայն զատ զատ կոնդակներով սինոդին և վեց թեմականներուն կը հրամայէր ոչ մի կերպով նոր օրէնքին զործագրութեան մասնակից գըտնուիլ (ՓէՊ. 37): Նանուցուած ժողովին նախ կը գումարուէրն թեմականներ և սինոդականներ 9 հոգի: Առւքիս եպիսկոպոսի նախազահութեամբ, և օգոստոս 9'ին հըրամանին համակերպելով հրաժարականներն կը մատուցանէին, որ սակայն ընթացք չէր ունենար: Երկու օր եաքը օգոստոս 11'ին կը գումարուէրն վանահայրներ և փոխանորդներ 22 հոգի, զարձեալ Առւքիս եպիսկոպոսի նախազահութեամբ, և կոյսու հաւատաբարմութիւնին վկայելով կը խոստանացին զործագրութեան չմասնակցի (ՓէՊ. 131-133): Նման յայտարարութիւնն մըն ալ ամբողջ միարանութիւնը կը ներկայէր (ՓէՊ. 129-130) յուրիս 30'ին: Իսկ կ. Պոլոյ պատրիարքը կանաչալ էր Տաճկահայոց բողոքին պաշտօնականութիւնն և ծանրակշռութիւն տալու համար օգոստոս 5'ին կ. Պոլոյս գտնուող եպիսկոպոսները ժողովի գումարել ներկայութեամբ 12 անդամոց, որքէին ինքն Օրմաննեան, Մեսրոպ Առւքիսունան, Բաբթողիմէսու Զոմիշեան, Գրիգորիս Յովհաննիսունան, Վահրամ Մանկունի, Տիմոթէս Սափիթեան, Եղինիկ Ապահունի, Հմայկակ Դիմաքսունան, Մկրտիչ Վեհապետեան, Գևորգ Երկյանան, Ներսէ Ասլաննեան և Գորբիէլ ձէվահիքանեան եպիսկոպոսներ (ՓէՊ. 84): Լոկ հովիսկոպոսներով ժողով գումարելու ձեւը նախազամստեցաւ, զի զործը ընդհանուոր հայ եկեղեցւոյ և ուղղակի Մայրաթուոյ հետ կապ ունէր, և զի սահմանոդրական վարչութեան կրօնական և քաղաքական ժողովներուն նշանակութիւնը նուազ էր ուռատական կառավարութեան աշխարքին: Այդ ժողովին մէջ նկատի առնաւեցաւ

թէ Մայրամբոսոյ և բոլոր ռօւսահայ եկին զեցեաց և վանօրէից և վարժարանաց շը- չահնա իւ՛ անշաք դրաները ուշցէնիւնն ճանչց- ուած և ընդունուած են իրր ընդհանուր պար- ագուշտ անշաք լաւագուշիւն էնեփշաց հայոց (Պէտ. 21), որով իրենք ալ իրր նոյն եկե- ղեցւոյ եպիսկոպոսներ և նոյն աթոռի միա- բաներ իրաւունք ունին իրենց ձաներ լուսի ընել ատլ: Այդ ակզրամբ որոշուեցաց իշ- եալ զոքքերու սեփականութեան համար և մատակարարութեան համար ամենուն ըս- տորագրութեամբ զրել ամենայն Հայոց կաւ- թողիկոսին և ուղղակի զիմել Ռուսաց կայ- սեր և ծանուցանել Ռուսաց զեսպոնին, և պատրիարքին յանձնուեցաւ զրութիւնները պատրաստել և առաքումները հոգալ: Կա- թողիկոսին զիբը չուտով պատրաստելով անմիջապէս ճանպար հանուեցաւ (Պէտ. 84- 85), իսկ կոյսիր ուղղուելիք զիբը զոդ- զիերէն պատրաստեցաւ և հայերէնի զի- բածուեցաւ, թէ՛ ազգային ընզուն պահելու և թէ՛ բոլոր ստորագրողներուն մտաշելի ը- նելու համար, և նոր զումարման մէջ կոր- զացուեցաւ և հաստատուեցաւ օգոստոս 21ին, և երկու լեզուով ընդօրինակուելով և ստորագրուելով յգուեցաւ (Պէտ. 91-95) ուղղուի կայսերական պալատան նախարար Ֆրիտիրիքսի՝ զեսպոնին խոնրդով որ յար- մարագոյն գատեց զործակից չերեւնուլ, իսկ իվան Զենովիէ զեսպանին յանձնուեցաւ ըն- դարձակ զոզզիերէն յիշատակագիր մը սեպ- տեմբեր 9 թուականով (Պէտ. 95-105), ու- րուն համեմատ նա ալ արտաքին զործոց նախարարութեան տեղեկագրեց յոյժ նպաս- տուոր ոճով, զի Գալիցինի ուղղութենէն տարակարծիք լըլլութ քանիցս առանց քաշ- ուելու յայտարարած էր:

Գ. 2

ՊԱՏՐԻԱՔԱՐԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս զանուող եպիսկոպոսներ կաթո- ղիկոսին ուղղուած զիրով կը յանձնարարէին նոր օրէնքին զործագրութիւնը արգիլու հա- մար ինուաց կոյսիր զիմել, և կը թերզդրէին յիշեցնել յատուկ օրէնքով ապահովուած իրա- ւունքները, պաշտօնական յայտարարու- թիւններով հաստատուած ակզրունքները, ժողովուրդին բարեկայտական զգացումնե- րուն քաղաքական հաւասարմութեան իմ ըլլութ, եկեղեցական կալուածոց և զոյց դաշողներուն դէմ արձակուած ահազին իրավուած ապահովութեան ուղարկուած կատարած իրենք, և այդ ալ հաւասար է իրաւուն- քին նընթաւելուն, և հայ եկեղեցւոյ իրաւուն- քին նընթաւին ալ եկեղեցւոյն զադարումն է, և իսկանառ է մէյն է հիմական ուինչ դեռ- բեան: Իսկ իրենք և իրենց ձայնակից բոլոր եպիսկոպոսներ և թեմակալներ երգմանը պարտաւորեալ ըլլալով իրենց եկեղեցւոյն պաշտամութեան՝ յոյժն մատունիւն ընդ- ուութէ եկեղեցւոյ և առաջանիւն ընդուութէ հաստա- տեան ըրած պիտի ըլլային եթէ լուկին: Կը յիշեցնեն եւս թէ մեռսիոյ մէջ զանուոր բոլոր կրօնքներ իրենց կրօնական պաշտօն- եաներու ձեռքով կը մատակարարեն իրենց սեփականութիւնները, և հայ եկեղեցին ալ պէտք է նոյն կերպով մատակարարուի, մա- նաւանդ որ մեռսիոյ հայ եկեղեցիններու բոլոր դոյքերը արդիւնք և սեփականութիւն նն ընդհանուր հայ եկեղեցւոյ և ոչ լոկ մեռսա- հայոց, ինչպէս պօրօքէնիէն ալ կ'ընդունի: Վաստան են որ եթէ այդ զիտազութիւններ կրօնաւու զեկուցուած ըլլային նոր օրէնքն իսկ կազմուած չըր ըլլար: Կը վկային թէ Հայեր իրենց եկեղեցին պահելէ զատ ուրիշ ձգտում չունին, և կը մերժեն իրենց վերագրուած անողիղ մատայութիւնները, կը յիշեցնեն Հայերու կողմէ ուռաւական պետական ըն- դարձակման և զարգացման համար մատուց- ուած ծառայութիւնները, կը խնզրեն հր- աշել բաւարար բաւարար բաւարար բաւարար, և կը կնքին օրնութիւններով և մաղթանք- ներով (Պէտ. 91-95): Դեսպանատան մա- տուցուած սեպակամերեր 9'ի յիշատակագիրը կը սկսի յայտարարել թէ ի'նչպէս եկեղեցւոյ սեփականութիւնը է լըսուշ առէ և յանչըսուս- է մատուցուած հաստատուած իրաւունք կը կազ- մէ, պօլուծէնիէն ալ զոյն ընդունուծ է, հա- կասական կը գտնէ նոր օրէնքին սեփականու- թեան իրաւունքը պահելլ և մատակարարու-

թեսն իրաւունքէ ընդմիշտ զրկելը, և այդ կէտը կը փաստաբանէ զանազան պիտական սիզբուն քններով և արամաբանական պատճառ սարսնութիւններով, հիմնուելով նաև իրասասանէ զուրս զանուող Հայերուն իրաւունքին տէր լինելուն, և պիտական հոկողութեան պէտք եղած պայմաններուն պօջաժնիկով հաստատուած ըլլայուն վրայ: Նկատի կ'առնէ որ ոռւստիսն եկեղեցւոյ գոյքերն սինողով, և կաթոլիկու ու բաղոքական ու մահմէտական կրօններու գոյքերն կրօնական մարմիններով կը մատակարարուին, և Հայոց համար ալ նոյն օրէնքը կը տիրէ, և նոյնը պէտք է շարունակէ: Կը հերքէ հայ հոգեւորականութեան կողմէ վատ մատակարարութեան բարուրանքը, նկատելով որ ցարդ և ոչ մէկ ամբոստանութիւն եղած է սինողի և տաեմաններու դէմ, որ եթէ ձշմորիս ալ ըլլայ, պաշտօնական քննութենէ և ժամանակաւոր հակողութենէ աւելի հետեւանք չէր կրնար ունենալ: Մատղրութիւն կը հրաւիրէ որ Ռուսանայեր ցարդ փայլած են իրենց հաւատաբութեամբ և անձնուէր ծառայութեամբ, կը հանեցնէ ընդհանուր հայութեան զգացած ցաւը և միանգումայն զարմանքը, իրենց եկեղեցւոյն պաշտպան եղուծ Ռուսիոյ յանկարծ իր գերը Փօխելուն վրայ, որ մինչև իսկ կրօնական ընդհանուր սկզբունքները ուսնենար ընելու կերպարունը կը զգնու: Կը պատմէ Տաճկանայերուն մէջ զգացուած ցնցումը, ամէն կողմէրէ պատրիարքարուն անզացող բողոքները, կաթողիկոսին զրուած յայտարարութիւնը, Ռուսաց կայսեր մատաւցուած զիմումը, և կը յաւայ որ գեսպանատանն ալ, որ այդ ամէնը աչքին ներքե կը տեսնէ, պիտի համի իւր կառավարութեան հոգորդել և գայթակութիւնը վերջացնել առաջ (Դիմ. 95-106): Պատրիարքը առանձին զրութեամբ սեպտեմբեր 24'ին կը հաղորդէր կաթողիկոսին այդ դիմումներուն պատճէնաները կարեւոր բացատրութիւններով, ինչպէս նաև օգոստոս 25'ի երկրորդ կոնդակին պատասխանները: Լասծ ըլլայով որ կաթողիկոսը միտք ունի հրաժարիլ կոմ Ռուսիոյէ մակնիլ, երկու միտքերն ալ եկեղեցւոյ վընասակար ըլլայլ բացատրելով, յանուն և պիտի պատասխան զամուն և վարչութեան և ժողովրդեան, կը յորդորէ արիարար զիմազրել առանց հրաժարելու և առանց հեռա-

նուլու: Ակնարկելով օսմանեան կառավարութեան միջնորդութեան ալ դիմում ընհալու միարին, կը յայտարարէ թէ ուղարկութիւն+է+էրութիւն+է+էրութիւն+է+էրութիւն, և աշխա է երբ ա մոռէ ընէ մունէրէ ու ու նոյն մատուցնելու մունէրէ կը յիշեցնէ նաև որ ժողովրդական բառուն ընդդիմութիւնը, +ըրացնութիւն+ւ հաւաքաջայ իւնութիւն+նութիւն, եթէ սոսոյդ են, կրնան Հայերուն վրայ խռովարի աշխանը հաստատել և վեսասկար դաւանոր: Վերջապէս և այսիկոպոսաց կողմէն կաթողիկոսին ուղղուած զրութեան պատճէնը տանէն և պաշնորդներու և առաջնորդներու յզուեցաւ, որ ստորագրելով գարձնեն, ուստի պատրիարքը կը խռովանոյ հաստաները հատզհատէ յզել է լուսաւուն համարական ուղարկութիւն+է+էրութիւն+է+էրութիւն+է+էրութիւն է բարձր է նոյն ուղարկութիւն+է+էրութիւն+է+էրութիւն (Դիմ. 106-109): Պատրիարքը աշխատիով ալ չը գոհանալով խնդիրին իսկութիւնը բացատրութիւն լուսաւածակ զրութիւն մը պատրաստեց գաղղիիրէն լեզուով, գործին անիրաւութիւնը և անտեղութիւններով, և զայն ուսուցչապէտ Փիլիպոս Վարդանեանի ձեռքով և պարսկական գեսպանատան խորհրդական Մասենեան Յօվհաննէս Խանի ծախքով Պերլինի մէջ ապագրել տալով, բոլոր Եւրոպիոյ և Ամերիկայի նախարարութեանց ու զեսպանութեանց և լրագիրներու և հանդէններու խմբագրութեանց ցրուել տուաւ, որ բաւական մեծ և նշանակալից յուղում պատճանեց ամէն կողմէր, և խիստ մեղադրանքներ չարծեց սուսական քաղաքականութեան զէմ, որնք իրենց աղդեցութիւններուն ունեցան զործին վերջաւորութեան վրայ:

*
Դ.

ԳՈՐԾԱԴՐԱԿԱՆ ԽՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Գալլիցինի կազմուծ շուրջ ու իւրաքանչ զործիլու ծրագրը գործադրութեան դրուած էր երբոր այդ թղթակցութիւնք և փոխարձ յարաբերութիւնը կը կատարուէին: Կաթողիկոսին կողմէ յայտարարուած զիմազրութեան և օրէնքին զործադրութիւնէ խուսափելուն վրայ, Երեւանի փոխնախանգաղաքան իշխան նակաշից սեպտեմբեր 3'ին Երեւանէ կը մեկնէր (Դիմ. 177), և 4'ին կաթողիկոսին

կը ներկայանոր գործադրութեան ստիպելու (ԴէՊ. 38): Կամեզիկոսը կը պատասխանէր թէ պետական գործոց համար երդուած էր կայսեր հաւատարիմ ըլլալ և պատրաստ էր կենօք չափ ծառացիկ, բայց հոդեւորական և կրօնական գործոց համար աւելի կանուխ երդուած էր Աստուծոյ հաւատարիմ մնալ և կեղեցւոյ, և չեր կրնար ուրիշ կերպ գործել: Պատգամաւորը կը կրկնէր թէ ինքն ալ երդուած կայսեր հաւատարիմ ըլլալ և մանայման ձառայիկ և պարտաւոր էր իւր նորաւոր իշխեր ուրիշ իշխեր էրդուած: իսկ կաթողիկոսը կը կրկնէր թէ եկեղեցւոյ գէմ ձեռնարկին մասնակից իննել չեր կրնար, և իրեններուն այ հրամայած էր մասնակից շրջու (ԴէՊ. 38-40): Իսկ ներկայից սեպտեմբեր 6'ին Յեղանակ լինելով էջանքանայ չոնիառ դադին Վաշարը ուրիշ իշխերն իշխեր չոնիառ լու, կամ որ նոյն է, հոգոյին կալուածները գրաւելու, Վաղարշառապատի կառավարչական պաշտօնատունը ժողով կը գումարէր և պաշտօնապէս կը հրամարագէր, թէ ենելու կայսեր կայսերական ուժուածների ուժուածներին և նոյն կենսեցան, և միայն ուժուածների իշխերի կայսերելու յեւը, թէ ինքն ոչ ուղարկած ոչ իշխերն և ոչ եկեղեցական ուժուածներին, և թէ այսուհետեւ այդ կալուածները գործածողները և վարողները գործ պիտի ունենան երկրագործութեան և պետական գոյաքրութեան ակտարարութեան հետ, և ոչ իշմիածնոյ գանքին հետ, և այդ ամէնը զիրի առնելով կնքել կուսայ և պաշտօնատուներու, 6 զիւզափեաներու, և 18 պատուաւոր զիւզափիներու ուսունց կաթողիկոսի կամ կաթողիկոսարանէ մէկու մը մասնակցութեան, համաձայն կաթողիկոսի յայսարարութեան: Այդ յայսարարութիւնը իրրն ապատամրութիւն նկատուելով (ԴէՊ. 41) Գալիցինի կողմէ ամէն անդ հրամարուեցաւ զրութեամբ և բանութեամբ եկեղեցական կալուածներէ զատ զոյից և զրամոց և արժէից ալ տիրանոլ, որով ընդուրածակուեցաւ բանագատութեանց շրջանը (§ 3027): Կաթողիկոսի հետ ներկայիցի տեսակցութիւնը կրկնուեցաւ սկզբաների 15'ին, ուր պատգամաւորը յայտնեց թէ ինչպէս կալուածները զրաւած են նոյնպէս պիտի զրաւեն զանձարանի մէջ զանուած գումարը: Կաթողիկոս կը պատասխանէ թէ սեպտեմբեր 13'ին զիմում ըրած է կայսեր և պատասխանին կը սպասէ, իսկ

զանուած զրամբէ չկրնար յանձնել որ միարանութեան օրապահնիկն է և իւր պաշտօնին անհրուելու է: Նուկաչցից կը կրկնէ թէ իւր նախագահած յանձնախումբը կալուածները զրաւած տաեն ընդդիմութեան հանդիպած շէր և զանձարանին զումարը շատ անհան է զրաւած կողուածներուն արժէ թին հանդէպ, իսկ կայսեր զիմումը գործադրութիւնը չէր կրնար արդիկել, զի ի հարկին ամէն բան նոր հրամանի համեմատ կրնար կարգագըրուիլ: Ասոր զիաց կաթողիկոսը նորէն կը կրկնէ թէ գործադրութեան չկրնար մասնակցիլ, և թէ իրեններուն ալ հրամայած է չմասնակցիլ: Պատգամաւորը գանձարանը կիրքի ներքեւ առնելով կը մեկնի, բայց կը զամանայ սեպտեմբեր 23'ին: Նախապէս վանաքը, վեհարանը, ճեմարանը, զաղարապատը պաշտօնան ենթարկելէ յիսոյ զանձարաննին զումար կը հրամայէ կոտրել, զրամարելը փրել և պարտականաւութեան կը տիրանոյ, արժեթիւղիմ 400,000 սուրվի, թրդթաղրամ 14,000, սոկեղրամ 1 ֆունտ, արծաթ զրամ 6 ֆունտ, և նին զրամներ, զորս զիմուուրական մեծ հակոզութեամբ կը փոխութրեն երեւան (ԴէՊ. 177-180): Երբոր այսուփ բանութիւն կը գործուէր լույրաթուի մէջ կաթողիկոսի անձնն գէմ, կրնայ մտածուիլ թէ ինչէր կրնային գործուիլ ուրիշ քաղաքներուն մէջ, սրոց պատմութիւնները մի մի եղերտկան վէպեր կրնան կաղմէր, բայց մնաք անդ մասնց մանրամասութեանց մանել զանց կընենք, և բաւական կը սեպտեմբեր կաթողագորագոյի, երեւանի, Ախուլգալաքի, Կարսի, Գանձակի, Տփղիսի, Շորնախիցեւանի, Մեծաբարքիլիսայի անունները յիշատակել (ԴէՊ. 206-240): Աւելի սաստիկ էին զիւզակուն քանանաներու և եկեղեցպաններու վրայ գործածուածները: Գիւղ մը 150 հեծելազօր ուզգամեխան շնիորով կը մտնէ և ժողովուրդին վրայ կը ծանրանայ, քահանայն և եկեղեցպանը կը ծեծուին և կը կապուին (ԴէՊ. 166): Աւրիշ զիւղ մը 22 եկեղեցպաններ միասին կը բանտարկուին, զրաւումը սառարգրել կը բանտարտուին, և երբ չեն հաւանիր, մտրակով կը ծեծուին, ցեխերու և ջուրերու մէջէն քալելով ճանապայ կը հանուին, զաւուապետին կը տարուին, զոմերու մէջ կը բանտարկուին, և մահուան ըստ պատուալիքով կը տանչուին ու կը չարչար-

ուին (Փէ. 168): Դամարլուի զիւղապետը երբոր երկար ու սաստիկ հարուտածներ ընդունելէ հաքը, հարուտածողի վրայ կը խոյժնայ, զիւղացւոց վրայ հրացանաձգութիւն կը հրամայուի, և չորս զիստիներ ու 25 զիրաւորներ գետին կը փռուին (Փէ. 170): Ուրիշ զիւղի մը եկեղեցպանը և աւազը սաստիկ կը գանտկուեն՝ յօժարակամ եկեղեցին և գոյքերը շյանձնելուն հաւատը, հեծեալիներու առջեւէն կը վազնեն, և բռնի եկեղեցի մանելով միայն 26 կոպեկ կը զրանեն (Փէ. 172): Սախումի ըրջանակէն զիւղի մը եկեղեցին սաստազը բանալով կը մտնեն, և քահանան ու եկեղեցպանը ու աւազը ձերբակալելով գատարանի կը յանձնեն (Փէ. 174): Նոյնը կը կտտարեն կտրուի և նույիի և ուրիշ շատ ըրջանակներու զիւղերուն մէջ, ամէն կողմ ձեւծ, տանջանք, ազանութիւն, նոր օրէնքին անունով (Փէ. 175): Միւնեոց կողմէր եկեղեցպան մը ծեծի տակ կը մնանի, քահանաներ կը բանատարկուին, եկեղեցիներ կը պղծուին, մինչեւ իսկ եկեղեցոյ խորաններ և սեղաններ կը քանդուին, միշտ ծածկուած հարստութիւն ձեռք ձգելու նպատակով: Անհանում է այս ահեակ զիւղուածներու շարքը (Փէ. 247-250), որոնք կարծեն թէ ուրիշ իւնիք ժամանելին հանիքուն դաշտուն ժամանելը լիւնիքնեցն (Փէ. 101):

Ե.

ԲՈՆԱԿԱՆ ԴԻՍԱԴՐՈՒԹԻՒՆ

Բէ միայն անակնկալ, ոյլ և անհաւատալի ըլլալու չափ անսպասնի էր կովկոսի հայկական շարժուումը: Եկեղեցական զոյից պահպանութիւնը նուիրական և կրօնական զգացմանց լրութիւն էր, և կտթողիկոսական զանէն արձակուած հրահանզը ամէնքը կը յուզէր, ապա թէ ոչ հնար չէր միտքէ իսկ անցունել, որ կովկասի խաղաղուսէր հայը, և ուսւական պետութեան ներքեւ իւր բարորութիւնը գտած և տիւր ահամանութիւնը անցուած էր այս ահամանութիւնը անցուած էր ապարակ կազմեց, և շարժուումը ուղղեց օրէնքին զէմ, և իրեն հետեւողները զիմազրութեան ասպարէզ հանեց, կարծես մարզանքի փորձեր ընելու գետին զըտոծ ըլլար: Այսաէս միացան միւսանայց մէջ եկեղեցական զգացումներն ու կուսակցական շարժումները, և գայնակցական պետք պարձանքի առիթ կազմեցին, իրեն թէ իրենք շարժութ ըլլային ազգովին զիմազրութեան գաղափարը, իրենք պահանձնական դիմաց նոր օրէնքին համակերպութիւնը, և իրենք ապատած կրօնքն ու եկեղեցին, իրը զի զնտակահար ըլլար են վագարչութիւնը:

Նորու չափ իւր եկեղեցւոյն յարած եւ փառած զզացումը, զի հայր սրչափ ալ զաւանութենէ զաւանութիւն անցնելու դիւրամէտ տեսնուի քրիստոնէութեան ընդարձակ և ազատամիա ըմբռնմամբ, նոյնչափ ալ ամսուր կը մնայ իւր եկեղեցիին պաշտպանութեան երբ իրաւունքի խնդիր ներկայանայ: Հետեւարար երբեք հայուն բնաւորութենէն ստոր կամ ընթացքէն զարտութիւն չէր միւսանայի բրուն մէջ արթնցած և սահնզը և իւր եկեղեցական ստացութիւններէն զրկուելուն զէմ զգացած զայրոյթը, և զայրոյթին հանգի համար կամ խառնուելով յառաջ բնդդիմութիւնը, որ կը յայտնուէր երբեմ զրկմանց հանդէպ յանձնէպ արիական և հաստատակամ համոզման հետեւոնք: Սակայն եղան որ կարծեցն կամ հաւատացնել ջանոցին թէ բոլորպին տարբեր եղած ըլլայ հայուն ընթացքը իրրե արդիւնք կուսակցական շարժումներու. մինչ կուսակցական ոզին տնարգող է կրօնական զգացմանց, և կը բռնական խնդիրներու հանդէպ անտարբեր կը մնայ, իրօնքն ու կրօնականութիւնն ու կրօնասիրութիւնը ձագու առարկայ դարձնելու չափ: Ըստ ենք արդէն թէ կուսակցական շարժումը, և ի մասնաւորի զանակցակունը, օսմանեան կառավարութեան ընթացքը և Տօնձկահայերուն վիճակը իրեն նպատակ ունէր, և միւսին մէջ հալածուած չէր, որպի միւսանայց մէջ բահանական ընթացքը և անհամանական զգացումները ապարակ կազմեցին, և շարժուումը ուղղեց օրէնքին զէմ, և իրեն հետեւողները զիմազրութեան ասպարէզ հանեց, կարծես մարզանքի փորձեր ընելու գետին զըտոծ ըլլար: Այսաէս միացան միւսանայց մէջ եկեղեցական զգացումներն ու կուսակցական շարժումները, և գայնակցական պետք պարձանքի առիթ կազմեցին, իրեն թէ իրենք շարժութ ըլլային ազգովին զիմազրութեան գաղափարը, իրենք պահանձնական դիմաց նոր օրէնքին համակերպութիւնը, և իրենք ապատած կրօնքն ու եկեղեցին, իրը զի զնտակահար ըլլար են վագարչութիւնը:

գլխաւորներէն Սարգիս Փօթոյեանը, և Դաւաստուզը զիւղի Գարեգին քահանոյն, և ինդպաման ըրեր են Կորիս գիւղի Խոչաստուր քահանայն, օրէնքին զործադրութեան համակերպելնուն համար (ԴէՊ. 252): Մինչեւ իսկ լրիմինանն ալ մասնաւոր նամակի մէջ կը զրէր թէ բանի մը օգտակար եղած ըլլան այդ խենթուկ ազաները: Սակայն պատմական եղելութեանց հետեւելով դժուար չէ տեսնել, թէ կուսակցական ձեւով եւ ոգուով շարժումներէն քաղուած օգուաները, եթէ իրօք ալ եղան եկեղեցական յուշումին մէջ, աւելի մեծ եղան անոնցմէ յուսաջ եկած վեասներն ու վտանգները: Եւ կեղեցւոյ պաշտամոնութեան համար մզուած պայքարընի, ի՞ուշ Դուռը Շունքան, ի՞ուշ Հանը Շունքան ազականերուն խառնութիւն (ԴէՊ. 195, 196, 198), խնդիրը իւր տեսուիկան խախոց, և պաշտամոնուղական ձեւին յարձակուականի փոխարկութիւր զործին իսկութիւնը չփոթեց, հայ տարրին դէմ թաթարական տարրը զինելու պատճառատնք կազմեց, և ազգային կորուստներու ու վեասներու տոիթ ընծայեց, և դաշնակցական ոյքը իւր մէջը ոչնչացուց, որ եթէ Ռուսահայոց մէջ տճելով Տաճկոհայոց պիտի նըսպասէր, Ռուսահայոց վրայ ալ, հարածանքներ, բանատրկութիւններ, աքսորոնքներ, զատաստաններ և զատապարտութիւններ հրաւիրեց, և ի՞ուշ Դուռը Շունքան ձեւնորդը շնորհը կարծեցնել տուաւ (ԴէՊ. 204): Իրաւ դէմնդէմ մրցումը ժամանակ անցնելով թուցաւ և եղերական հետեւանքները նըսպակցան, սակայն տեղական կուսավարութեան միտքէն չնշնչուեցաւ Հայոց հանդէպ կասկածու և զագոզական ընթացքը, որուն տեղի տրուած չէր ըլլար, եթէ կուսակցութիւնը զործի խառնութեանց չըլլար, կամ զանէ խառնուած ասան խնդիրին տարրուի ձեւեր և պարագաներ չխառնէր: Տերը (terreur) բաւածը, որ է սպառնալիքով ահարեկել, և զործադրութեամբ սպառնալիքը զօրոցընել, զոր գաշնակցականութիւնը իրը պարձանաք կիւրացնէ (ԴէՊ. 251), չենք կործեր որ եկեղեցական զոյից խնդիրը լուծեւու իսկական փասան եղած ըլլայ, մինչ ընդհակուակն Ռուսահայոց իրօք 12'ին երկրորդ ուղերձ մըն ալ կը յզէին կայսեր, որուն մէջ զըրդածուած բոնութեանց դէմ կը զանգութը տուաւ:

վրայ 1903 հոկտեմբեր 14'ին կատարուած դաշունահար մահամործը (ԴէՊ. 253), Գումիցինը չկասեցուց իւր բռնաւորական ձեւնորդներէն, և Անարէէվ նահանգապետի (ԴէՊ. 258) և Բօղուալովաքի զաւառապետին (ԴէՊ. 263) և Բըկով գնդապետին (ԴէՊ. 264), և ուրիշ քանի մը լրտեսներու սպանութիւնները (ԴէՊ. 265) չնուազեցին ոնիւրու պաշտօնեաններու թիւը, երբ անեցնեցին Ռուսահայոց վրայ կատարուած փորձանքներուն դէզը:

2.

ԴԻԱԴԱՐՁ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Երբ կուսակցական շարժումները կովկասի մէջ խնդիրին խկութիւնը կը խանդարէին, խաղաղ զիմադրութեան նախական ձեւը խափանուած չէր բարձր շրջաններու և արաւասահմանի շրջանակներու մէջ, և կըշ արուանակէր օրինական զիմումներով, համազիչ յորդորակներով և ոգեւորեալ քաջութիւններով, որոնք ամէն կողմերէ կը համելին լրիմինանի, որպէսզի տեղի չառյ և ոչ ալ տեղէն կոմ պաշտօնէն հնեռանայ, ոյլ կրաւորական և խաղաղ զիմադրութեամբ անեղծ պահէր սկզբունքն ու իրաւունքը, նոր օրէնքին ազգած ցնցումը մինչև նոր աշխարհ հասած էր, և Ամերիկայի, Փրովիտէնս և Եփքակո և Աւստր քաղաքներէ բռոգախան քաջալիքականները կը համելին (ԴէՊ. 68-69), Պուլկարտա, Եգիպտոս, Պարսկաստան, Հնդկաստան իրենց ձայնը կը բարձրացնէին (ԴէՊ. 69-76), Թուրքիոյ և պիսկոպոսներ և առաջնորդներ կ. Պոլիսէ յղուած զրութեան համերաշխութիւննին կը յայտարարէին, որոնք հետզհետէ Մայրաթոռ կը յզուէին, կիլիկիոյ կոթողիկոս Խապայեան, Երուսաղէմի պատրիարք Վեհապետեան, Խափորդ պատրիարք Իզմիրիկան (ԴէՊ. 86), իրենց հեղինակաւոր ձայնով մրիմնունք կը սրբազնդէին. Օրմաննեան շարունակեալ թզթակցութեամբ եղելութեանց ամէն մանրամասնութիւնները կը հազորդէր (ԴէՊ. 106-112), կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսներ Ռուսաց կոյսեր մատուցած ուղերձին պատասխանը ուշանալուն և հետզհետէ բռնութեանց և բռնադատութեանց լուրեր հասնելուն վրայ, նոյնմբեր 12'ին երկրորդ ուղերձ մըն ալ կը յզէին կայսեր, որուն մէջ զըրդածուած բոնութեանց դէմ կը զանգութը

տէին, թէ նոր կարգադրութիւնք դադիվծութիւնուն և յայտնութեա, և պէս հեշտուր համարդին ըստի, թէ ընտէր լաւառն յանձն այս անձն առնել ըստին: Աւրիշ ահասոթեամբ մըն այ կը հաւասառէին թէ նայ ինցեալ և զարդ գոյն վահան և վահ էին շնչուր ինքը, և թէ նա որբաց անձն անարդ շնչուր յենան այս տարբէ էին շնչուր, և չկընար գործակիլ սրբազնութեան: Աւրիշ շատ փաստերով կը ջանան եղիսկոպոսներ կայսեր խորձին և հաւատքին վրայ ազգել, որ դադարին օրէնքին գործադրութիւնը և գործադրութեան բանութիւնները, զորս համառօտակի բայց համարձակ կը թուարկեն (ԹէՊ. 112-115): Կիլիկիոյ կաթողիկոս և երուսաղէմի պատրիարքն ալ կայսեր հասցէին մէկոմէկ ուշզեր հասուցած էին պատրիարքին, զորս Օրմաննեան գաղղիքէնի թարգմանելով կը յցէ հասցէին (ԹէՊ. 116) և արքունաց նախարարը նոյեմբեր 26'ին և զեկտեմբեր 2'ին պաշտօնապիմներով Օրմաննեանի կը հազրոցէր կայսեր ուղղուած բոլոր զիրերուն կայսեր յանձնուած ըլլալը (ԹէՊ. 127), բայց միխթարակոն արգիւնք մը չէր լսուեր տակային, ընդհակառակն լրադրական տեղեկութիւն մը կը հաղորդէր թէ պատուելու էլեւ նաւատէր է (ԹէՊ. 116): Բայց կաթողիկոսն ալ կը հաւասառէր թէ էին շնչուր ինքնուշու շնչուր ուշուշու շնչուր է իրենց կողմէ (ԹէՊ. 124): Ասոր համ մէկակ կաթողիկոսը կը տեղեկացնէր, թէ որչափ ալ օրապահիկ միջոցներէ ալ զրկուած է ամոռը, առկայն ջերմեանդ ազգայիններ պատուածնեան և հանդիսանան, և միորանութիւնն ու հեմարանը շնչուր շնչուր յանձն դաշնէ և յանձնէր դէտուշ (ԹէՊ. 119): Միւս կողմէ կ. Պոյիս կը յանձնարարէր թէ պէտք չէ կառավարութենէ դրամ ընդունիլ, եթէ տալ իսկ ուղուիր (ԹէՊ. 117): կը յանձնարարէր ևս մէկ կամ երկու կարող անձեր ունենալ Պետրուրը, որ կարենան անդեկանալ և տեղեկացնէր կատարուած անցուգործերը, և ծանօթութիւններ քաղել Պոլոժէնիքի մուծուելիք փոփոխութեանց վրայ, և թախանձանօք կը խնդրէր միաքէ հանել չըրածարելու կամ հեռանալու կոմ աթոռ տեղափոխելու խորհուրդները (ԹէՊ. 121-124): Այս ցրեւ անդեկութիւնները բաւական կը սեպենք իջմիածնոյ Մայրաթօսին վրայ տիրող տաղնապին նկարագիրը զծելու առանց

շատ մանրամասնութեանց մանելու: Արիմ ևսն կաթողիկոս կացութեան սասականալը ահսնալով և անձամբ Պետրուրը երթալու արտօնութեան զրացուելուն վրայ, չառ ընդունակութիւն (ԹէՊ. 137-165) բացատրական դրսութիւն պատրաստել կուտար, նոր օրէնքին տրամադրութեանց և հետեւ անց, Հայ Եկեղեցոյ իրաւանց և կանոնաց, և օրէնքին իր պատճառ ցուցած ենթագրութեանց վրայ: Պարունակութիւնը վերագոյնդ զբաւած կամ քաղուած անդեկան թեանց համաձայն ըլլալուն, նորէն քաղել տեկորդ կը սեպենք: Բացատրական գիրը դեկտեմբեր 12 թուակիր նումակով մը կայսեր կը յգէր, խոդրելով նկատի առնել իւր գիրը և յատուի յանձնամուգով մը կազմիլ այդ գործին քննութեան համար, և իրեն ալ ձայն տալ նոյն ժողովին մէջ, որպէսզի արգորութիւն և ճշմարատ թիւն երեւան գան և զայթակութիւն ու տակնապ վերջ դանան (ԹէՊ. 134-137): Սակայն այդ արգար խընդունքն ալ նկատի չէր տանուեր, ոյնպէս որ 1903 սեպտեմբեր 2'ին Բայկուի մէջ ըսկիզր տառած արձակ համարձակ զիմոզրութեան տարեգարձին, 1904 սեպտեմբեր 2'ին կուսակցական մարմինը հայերը կը հրաշրէր զիմոզրարձութեան վրայ համատուն մեալու (ԹէՊ. 198-200): Բայց տոկոսին շուտապ չփերջացու տաղնապ, ինչիքեր և կալուածներ գրաւելու համար թափուած հայու արբենը, բողոքող զոհերը, զիմադրամ ըմբռասցումները զրեթէ տարի մը ևս շարունակեցին, ցորչափ Քաղիցին իր պաշտօնին վրայ մեաց, և բանութեամբ ժողովուրդը զաղելու և յուսազրութեամբ կառավարութիւնը խարելու ձևանարկը շարունակից:

Է.

ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ՑԵՂԱՏՐՁՈՒՄ

Առուսանուց վրայ հասած տաղնալին իրեւ նկանակ և գործադիր մատնանիշ եղած է կովկասի կառավարչառական Փալիցինը. սակայն նա չէր յաջողեր եթէ իրեն հովանաւոր և քաջարերոդ շունենար ներքին զործոց նախարար Պէտքն, որ ոչ միայն կայսեր վրայ կ'ողգէր պէտք եղած հրամանները արձակել առաւ, այլև Քալիցինը կը պաշտօնէր և բուռն հրամանդներով կը զինէր: Այդ կէտը վսահնօրէն կրնանք շեշտել, զիտելով որ Ռուսիոյ կայսերական եւ

կառավարությունը չը ջանակենիրում առևտութիւնը՝ ները փախուեցան Պլէզի մահուամբը, որ առջի կ'ունենար 1904'ի վերջին օրերը՝ իշխան յաջորդող Միլիոյթօրոյսք-Միրօքի իշխանին առաջին գործերին մին կ'ըլլար Գալլիցինը պաշտօնէն հասացնել (05. Բիջ. 2529), և Կովկասը առժամարար յանձնել օգնական Մալամա գօրավարին, մինչև նոր կառավարչափետի ընտրութիւնը՝ Պարզիան Առաջի եպիսկոպոս և վարդապետներէն բաւական թւռով Գալլիցինի հրամանով թուռուց ներսից աքսորուած էին, իր Մայրաթուոյ գիմագրութիւնը զսպելու միջոց, Մայրաթուուը կը մնար ամէն միջոցներէ զուրկի, և բարձրագաշտներու նպաստներուն կարօտ, ալեւ որեալ ու ուկար ու հիւանդագին կաթողիկոսը տաղնապեներու ներքեւ կ'ընկճըւէր, ներքին բարեկարգ ընթացքին օճանամերը կը պակաէին, սակայն զիմագարձ ուղղութիւնը միշտ միշտնոյն կերպով կը չարունակէր. և այդ ձախող ընթացքը, ո՞վ զիտէ, մինչեւ Ե՞րբ պիտի տեէր եթէ Պլէզի ասպէր և Գալլիցին իշխանը. բայց այս երկուքին հրապարակէն պակսելը առիթ ընտանութեան նոր շրջան մը ակսելու, որուն առաջին նշանը կ. Պոլիսէ տրուեցու, և 1905 յունուար 2'ին Օրմաննեան նոր գիմում մը ըրաւ Ռուսիոյ կայսեր (05. Բիջ. 2544), առիթ առնելով Վանայ վանքերուն Կովկասի մէջ ունեցած հասութիւներուն ալ պրաւուիլը (05. Բիջ. 2529), և կրինելով ընդհանրապէս նոր օրէնքին զաղարման մոտին կանխաւ եղած զիմութերը (§ 3027): Կայսերական արքունեաց նոխարարը 12'ին կը պատասխանէր և բոլոր զրութեանց ներքին գործոց նախարարին քննութեան յանձնուած ըլլալը կը ծանուցանէր (05. Բիջ. 2545): Յուսագրական էր պատասխանը և կառավարական առևտութեանց մէջ յեղաշըռումի նշանն էր. զի Մալամա ալ եթէ օրէնքը խափանել չէր կրնար, զոնէ ուղղակի Տփզիսէ բղխոծ կորդագրութիւնները կը մնացմէր և աքսորուած միարաններուն հետպհակ զառնուլը կը ներէր (05. Բիջ. 2549): Մրիմինան ալ նոր ողեւորութիւն կը զգենուր և նոր յիշասակագիրի մը հետ պատգամաւորներ ալ կը յըղէր Պետրուրդ տեղեկութիւն քաղելու եւ բացատրութիւն տալու, և այդ յանձնարարութեան առկայութիւնը կը հանդի

հան Ներսէս հպիսկոպոսը՝ իր տթոռական գործոց հմուտ և վարժ, և Տէր-Մովսիսեան Մհորով վարդապետը՝ իր Խուսիոյ համալսարանական և լեզուին քաջոնմուտ, որոնք Պետրուրդ հասնելով ներքին գործոց նախարարութ գործուած և Պուլիկինը պաշտօնի անցած կը զտնէին, Ավիսթորուլքէն ոչ նըւռող նպաստուոր անձնուորութիւն մը (05. Բիջ. 2564): Եպիստաւոր յեղաշըմոն հիմ կը կազմէր 1903 փետրուար 16'ի հրովարտակը, որով պաշտօնուական անձներ կը հըրաւիրուէին կառավարական բարւոքման և բարգտաւածման համար Ներկայէլ էրենց Դէպուտատներէ կառավարուական անձներ, և այդ ձրազիրներուն մէջ կը մտնէր նաև Բայր այշէն և այշէն հոգուած հոգուածիներէ այշէն, բայրներէ էրենց էրենց իշեն և իշեն էրենց էրենց ըստ իշեն (03. ԱՐԲ. 292-293): Այդ ժամանակները սկսած էր և կը չարունակէր 1904 յունուար 27'ին ձարսնի դէմ հրատարակուած պատերազմը (04. ԱՐԲ. 195), և զէնքի բախտը նպաստուոր չէր գտանար Ռուսներուն, ինչ որ կը գայթակեցնէր և կը զայրացնէր նոյն խակ միամիտ ժողովուրզը, տեսնելով ոչ-քրիստոնեայ ազգի մը քրիստոնէին զրայ զօրանալը, և կառավարութիւնը կը ստիպէր ժողովուրզէն հնուցնելու քրիստոնեանները վշտացնող և միտքերը վրդովոզ պարուզաները, և մեղմօրինակ ընթացքով մը տէրւութեան համուկիր և կառավարութեան համերաշն պահելու իւր ամէն դասակարգերը և ամէնն ազգութիւնները: Արշաֆ ալ Խուսիոյ կառավարական շրջանակներու մէջ բարեմտութեան զօրանալը ենթագրենք, չենք կինար շիստովանիլ թէ կառավարութեան մը, մանաւունդ զինքն ամենիմաստ և ամենաշկարութեան կառավարութեան մը հաւմար, զիւրին չէր որոշումէն ևս գառնալ, զնուածը չնշել, սխալու ըլլալը ընդունիլ, մատարական երկանքի մը հոգեկան ցաւերը յանձն առնոււ: Այդ փորձէն անցան Հայ Եկեղեցւոյ զոյից և կալուածոց համար 1903-ին, և Հայ զպրոցներու համար 1898'ին տրուած զրաւման հրամանները: Յատուկ յանձնաժողով մը կազմուեցաւ ներքին գործոց նախարարութեան մէջ, որուն մասին փետրուարի վերջինը լուսեցաւ թէ զրուած օրէնքները անփոխանիլ պահել կը խորհի (05. Բիջ. 2570): սակայն չուտով վրայ հա-

սաւ կովկասի կառավարչապետութեան փոխարքայութեան վերածուիլը և Ելարիսն Վորանցով-Տաշկով կոմսին մարտ Տիբն այդ պաշտօնին անուանուիլը, որ կը յիշեցնէր Կովկասի մէջ պաշտելի ըլլալու չափ սիրուած նախկին Վորոնցովի անունը, որուն թուն ալ էր Տաշկովի անուսինը (05. Բիջ. 2580), և միւսնոյն տան կը բռուէր թէ Հայոց գործն ալ նոյն փոխարքային յանձնեւած է (05. Բիջ. 2588): Պետրուրդ զւտուող պատգամուարները այս անդամ ըսկան Վորոնցովի հետ բանակցիլ, և յուսադրական և քաջալերական պատասխաններ ընդունիլ, ինչպէս Խիւտովերտեան մորտ 28/ին երիմնանի կը հեռազրէր (05. Բիջ. 2592). բայց դարձեալ վերջնական սրոշումը կը յագատէր, զի պէտք էր սովորականն ձեւուերացութիւնները լրացնել և արդարացնեցիլ հանգամանքները պատրաստել, որչափ ալ յոսաստմներ և յուսադրութիւններ օրէօր կը զօրանացին և կը վկայուէին, ուրոց արձուուանդ կ'ըլլար նոյն իսկ Լազուրեան իշխանազունը (05. Բիջ. 2605): Տըփիսիսի քաղաքացին ժողովն ալ պաշտօնաւակէս զիմում կը կոտարէր Հայոց ինսպաս (05. Բիջ. 2614), ուռաւական նեղինակաւոր լըրացիներ ալ, որ երբեմն Հայերու հակառակ հրատարակութիւններ ըրած էին, այս անգամ ստիգոդական կը հոչչեկին Հայերը օր տառջ զոհացնել (05. Բիջ. 2608): Այս նպատակով փոխարքային համանելին ետքը յատուկ յանձնաժողով մը կազմուիլը կը խօսուէր (05. Բիջ. 2635), միւս կողմէ կը հրատարակուէր թէ վերցուած է Տաճկանայ եպիսկոպոսացուներուն համար էջմիածին գտնու արգելքը որ Փալիցինէ դրուած էր, և Հայ եկեղեցականներուն դատարանական արտօնութիւններէ զրկուելուն բարձր հըրատանը (05. Բիջ. 2637): Վերջապէս Վորոնցով Տիգիս հասաւ մայիս 5/ին, Հայերը խանգալառութեամբ ընդունելութիւն ըրին սպասուած յաջողութիւնը իրք լրացած նըլկուալով, կաթողիկոսին կողմէ յատուկ պատգամամարտութիւն մը եկած էր Էջմիածինէ փոխարքան ընդունելու բարձր համար, որ փոխարքար նոյն իսկ հասած օրը Օրթոսաքս եկեղեցին ուժան ընելէ ետքը, Հայոց Մայրեկեղեցին ալ կուգար ուխտ կատարելու (05. Բիջ. 2638): Վորոնցով չուտով պաշտօնական քննութիւնը բացու, տեղեկութիւններ համար համար համար կառավարութիւնը անդամ էր կառավարութիւնը անդամ, ամէն մաղթանքներ և եռանգուստ շնորհակալիքներ կը խօսի, և վատահանութիւնը ստանալով որ աւետիսը կը բարձրացնական համար համար կառավարութիւնը անդամ էր, մեռական կառավարութիւններն ալ զանց ընել հնարք էր, և մայիս 29/ին տակաւին զործը անորոշ կ'ըստ էր (05. Բիջ. 2681). սակայն յունիս 25/ին, կաթողիկոսին անձամբ կատարուծ բարձրագույն այցելութեան առթիւ, փոխարքայն կը յայտնէ թէ Յեւ այս Էջմիածինէ (05. Բիջ. 2683), ինչ որ ենթագրել կուտայ թէ նա որդէն պէտք եղած պաշտօնագիրը յշուած էր Պետրոսուրդ, որ ըստ այնմ հրովարտակը պատրաստուի:

Բ. 2

ԳԵՐԱՍԱԼԸ ՏԱԳՆԱՊԻՆ

Յունիս 25/ի աւետիսը սիրտերը հանգարեցուցիկ էր: Պետրոսուրդէ զարձող Տէր-Մովսիսին ալ վատահանութիւններչնչող տեղիկութիւններ բերած էր կաթողիկոսին: բայց ամիս մը ես կ'անցնէր և սպասուած պաշտօնական հրովարտակը դեռ չէր երեւնոր իրիմնան, Վորոնցովի տուած այցելութենէն ետքը, Պօրծմի ամարտինոցը մեկնած էր իւր վատահանութիւններ կաղզութելու: Յունիս 24/ին Տիգիս դարձաւ Միքոյէի օրդի նեկողայս մէծ զաւրսը ոդջուններու, և քանի մը օրեր եւս Տիգիս զեղերելով իջմումին դատանուուր: Օգոստոս 2/ին երկուշարքի օր, կէս յուսախար, այլ ոչ յուսարեկ, փոխարքայական ապարանքը այցելութեան գնաց՝ կոմսին և կոմսունեացն հրաժեստի ոդջուններու: Երբոր խօսքը նորէն զարցաներու և կուրուածներու խնդիրներուն շուրջը կը դառնար, և կաթողիկոս իր սովորական ակնկալութիւններն ու բացարութիւնները խօսելու կ'ըլլար, Վորոնցով խօսքը ընդհատելով կ'աւետէ թէ թագուար-կայսը, համաձայն կաթողիկոսի խնդրունքին և իր ակնկալիքիրին, բարեհանեցած նույսուստը հետուած չէնել Հայոց եկեղեցւական կ'ըստ Երմանը և Հայութիւնը (05. Բիջ. 2714): իրօք ալ նախօրդ օր օգոստոս 1/ին ստորագրուած էր Բայրուխուչը հրաժան շերէն ներական սույն ամառաւած առ աւետիսը կը բի

հայ պաշտամագես հազորդել, անմիջապէս առաջնորդարան կը գտանայ և հեռազիրներ կը պատրաստէ սինողին, Կիլիկիոյ կաթողիկոսին, Երաւազէմի և կ. Պալայ պատրիարքներուն, Ռուսահայոց և Պարսկահայոց առաջնորդներուն, զիխաւոր վանահայրներուն և կորեւոր քաջաքներուն, զոր նոյն երեխոյ և յաջորդ տառաւ հետզնեաէ կը յգէ և կ. Պոլս ուղղուած հեռազիրը օգոստոս 3'ի երեխոյին հասնելուն, փոխանակ Գումզգորուի պատրիարքարան տարուելու, Քերայի կայուրանէն Եհրայի պատրիարքին առանը յանձնելած էր, զոր նու հոն պատրաստ կը գտնէր, երբոր ուշ ատեն տաւն կը գտանար, և նոյն գիշեր ու յոջորդ առաւու աւետիսիր բայր կարեւոր անձանց կը հասցնէր: Աւելորդ է Օրմաննեանի զգացուծ միմիթարութեան մասին առանձինն խօսիլ, զի ամէնքը ծանօթ էին անոր Երևանու ի վեց շաբաթունեւ աշխատաւ և հաւատաւուն չափերուն, Քիշառքերուն, Յեղարքիներուն, և բերդու ու Քըսառ յաքնինեւներուն (Օ. ԲԹԶ. 2708): Բավանգակ հայութեան մէջ ալ մած եղաւ խնդութիւնը, որչափ մեծ եղած էր երկու տարի առաջ զգացուած տիրութիւնը, որուն հաւասարիքն են ոչ միայն Ռուսիոյ բայր քաջաքներուն ու գիւղքազաքաքներուն ու զիւղերուն մէջ կատարուած տօնական հանդէսները, ոյլ և ամէն կողմերէ տեղացազ հարիւրաւոր հեռազիրները, ամէնն ալ սիրաի եռանդուն զեղուածներով լիցուն: Կաթողիկոսը չըջարերակունով հրամացած էր առաջիկայ օգոստոս 7'ին Աստուածածնայ բարեկնողանի կիրակի օրը, գոհարանական մազմոննքներ կատարել Ռուսիոյ եկեղեցիներուն մէջ. Տփղիսինքն նախազանց վանքի մայրեկեղեցւոյ բակը կատարուած մաղթունքն, ուր մօտ 20,000 բազմութիւն էր հաւաքուած. Էջմիածնի մէջ ալ տեղապահ Արիստակէն Դաւթեան եպիսկոպոսի զիխաւորութիւններուն մէջ. Տփղիսինքն նախազանց վանքի մայրեկեղեցւոյ բակը կատարուեցան: Խրիմնան օգոստոս 8'ին Տփղիսի մէկնեցաւ, Դարաքիլիստ զիշերեց և օր մը հանդասացաւ, և 10'ին մտաւ Առևանդրապղու, որտեղ անցուց 13'ին Շողակաթի և 14'ին Վերափոխման տօները, և 15'ին Էջմիածնի մտաւ եռանդուն ցոյցերով և հանգիստական չքեզութեամբ (Օ. ԱՐ. 799.803): Տփղիսէ չերած Խրիմնան երախտազիտական հեռազիրներ ուղղած էր կոյ-

սեր ի Պետրուրդ և փոխարքային կիսլովորակ, որոնց պատասխաններուն մէջ կայսրը կը չհշտէր, Աստուած իւստանաշէ հայ հետը ուրբարչնեւն իւրաքանչ շայ ուսանեած վայրէն առաջնորդ կը յիշեցնէ թէ վատահ է որ Ասէնակ հայերը իւ հայութեան էրենց հաստութէ հոգութեան պատուածնեւ թէ որուած շնորհաւութէ: Տփղիսի մեծամեծներն ալ առանձինութեան չնորդագույն կը յիշերը յայտնագույն իւրաքանչ կոնդակ մը ուղղած էր ամբողջ հայութեան, յանուանէ յիշերը Սահակ կաթողիկոս և Յարութիւն ու Մատուքիա պատրիարքները (Օ. ԱՐ. 773-776): Այսպէս կը լրանար Ռուսահայոց եւ ամենայն Հայոց երկարաւու տագնապին շրբանը, և խնդութեան և խնդակցութեան զգացումներ կը յայտնուէին աշխարհիս մէկ ծայրէն մինչէ միւս ծայրը, ուրուրէք որ կը գանուելին ցրուեալ ու վայրավատին հայութեան մէկ անգամը: Հայութեան զգացած ուրախութիւնը հայութեանէ դուրս ալ կը տարածուէր. զի բավանդակ ազգերու վրայ տիսուր տպաւորութիւն թողած էր Ռուսիոյ ընդդրիած Պէէլիսան ուղղութիւնը և Գալիցինեան գործունէութիւնը: Ռուսաստան ինչ քըն ալ նոյն օրեր գժուարին տագնապիներէն կ'անցնէն, ճարանական պատերազմին ձափողութիւնը և ժողովրդական ներքին յուզումները շատ մօտէն հետեւած էին Հայոց զէմ ձեռք առնուած խսանաթեանց, եւ կործես թէ Հայոց հանգէպ ցուցուած արդարակորով հատուցումը բարեկուչակ կ'ըլլար բովանդակ առնուական կայսերութեան. զի նոյն օրեր, օգոստոս 6'ին հրամարակուեցաւ ժողովրդական ազատութեանց խոսանմալիք հրամարակը (Օ. ԱՐ. 763-766), և օգոստոս 17'ին կը կնքուէր Ճարոնի և Ռուսակութիւն հաշտութեան մէջն երթամութիւնը նախազանց կուզիլիք Ամերիկոյ նախազան Ռուզվէլթի միջնորդութեամբ, և Ռուսիոյ կողմէ տուզունք չմարելու և միայն Սախալին կղզին կ'էօր թուլու նպաստաւոր պայմաններով (Օ. ԲԹԶ. 2718):

Ֆ.

ՊԱՏՏՈՒԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՍՓՈՓՈՒՄ

Օգոստոս 1'ի բարձրագոյն հըրամանագիրը, ուսւսերէն կոչմամբ ու ու ու,

իրեւ հիմկ' ընդունի թէ վերջին կարգապետա-
թիւններ որքեւ են լընուհայ ոչ-բանի-բնեա-
խնասուր և խոշո շոքացնա, և թէ թիւ-
րիմոցութիւններ յառաջ կուզային վերջին
քայլութիւն ունեցու չինուրութիւն ներսինի-
ծանր խստավանութիւններ, որոնք վետին
կ'արգարացնեն Մայրաթոռին և ուստահոյ
ժաղովուրդին հաստատամիտ զիմադրածու-
թիւնը: Իսկ իր հրամանին նպաստակ կ'ըն-
դունի Հայութաւուրական հաքեւրութիւննեան ա-
հաքեւրութիւննեան ներսու հայութաւուրա-
կան հայութեան ալ մշտնջենական պահանջը,
որ այս կերպով իւր զոհացումը կը գտնէր:
Հայոց կրած տապնապը սկիզբն առած էր
ոզգային զպրցները ազգային իշխանու-
թեան ձեռքէն հոնքելով պիտուկան իշխա-
նութեանց յանձնելու օրոշումէն: Առաջին
քայլը տանուեցաւ զպրցներուն փորչու-
թիւնն ու ծրագիրը ձեռք առնելու հրամա-
նով, իսկ այդ հրամանը զօրացնելու համար
զպրցներու հասոյթներուն ու մատակարա-
րութեան վրայ ձեռք դրուեցաւ 1898 մարտ
26'ի օրէնքով, և երբ հասոյթներուն եկե-
ղեցւոյ և ոչ զպրցի սեփականութիւն ըլ-
լալը դատաստանով հաստատուեցաւ, եկե-
ղեցիներու և բոլոր հոգեւորական հաստա-
տութեանց կալուածներուն և հասոյթներուն
զրուաւմը օրինադրուեցաւ 1903 յունիս 12'ի
օրէնքով, ուսկից ծագեցաւ մեծագոյն տազ-
նոսպը (§ 3025): Աւատի կրնանք ըսկել թէ ե-
կեղեցական կալուածոց զրուաւմը օրէնքին
իսկապէս նպատակը չէր, այլ միջոց էր
զպրցական օրէնքին գործադրութիւնը ա-
պահովելու, ուսկից կը հետափ օգոստոս 1'ի
հրամանագիրին իր հիմնական տրամադր-
րութիւն նկատելը ազգային զպրցներուն
վարչութեան 1894 յուլիս 19'ի օրէնքին
վերագանգը, որ է ըսկել Գեղորդ կաթողի-
կանի օրով հաստատուած զրութեան վերա-
հաստատուիլը, որով լսա ինքնեան կ'ոչնչա-
նան և չեղեալ կը զառնան 1898'ի և 1903'ի
օրէնքները, որոնք իրեւ թերի և իրեւ
վեսակար վկայուած են նոր հրամանագի-
րին մէջ: Այս նոր պաշտօնագիրին պարու-
նակութիւնը վերլուծած ատենինի կը զըտ-
նենք ևս մաս մը կարգադրութիւններ ո-
րոնք անմիջապէս պիտի կարգադրուին, և
մաս մըն ալ որոնք պիտի ուսումնասիրուին
առաջիկային օրէնք դառնալու համար: Ա-

ռաջիններն են, 1. Դպրոցներուն վարչու-
թիւնն ու մատակարարութիւնը յանձնել
ազգային հոգեար իշխանութեան: 2. Նոր
զպրցներու բացումը արտօնելու իրաւուն-
քը յանձնել փոխարքայութեան: 3. Վերա-
գործնել բոլոր զրաւեալ կարուածներն ու
հասոյթները ու զոյքերը: 4. Ներքին զոր-
ծոց և արքունական կալուածոց նախա-
րարներուն հետ հաշիները կարգադրել,
ձեզելով սկսած զանձումները և զեզէլով
կարուածոց վրայ ծախքերը, զպրցաց և
եկեղեցեաց և ուրիշ հաստատութեանց հա-
մար զմարտւածները և զրաւմանց տաթիւ-
եղած ծախքերը: 5. Ներքին զործոց և
պիտական կարուածոց և հանրային կըր-
թութեան նախարարութեանց ձեռք քաշել
տալ Հայ եկեղեցեաց և զպրցաց գործերէն,
և պիտական գործերը յանձնել փոխարքայ-
ութեան: 6. Ամէն միջանկեալ խնդիրներ
և խնդիրի առիթ տուող պարագաներ են-
թարկել փոխարքայութեան որոշման: Իսկ
ուսումնասիրուելիք և պատրաստաւելիք
գործերն են: 1. Հայոց եկեղեցական նախ-
նական զպրցներու կանոնագրութիւն: 2.
Հայ եկեղեցւոյ ստացուածոց մատակարա-
րութեան իստոնագրութիւն: 3. Հայ եկե-
ղեցւոյ պատականոց հողերու վրայ հաստա-
տուած ընակութեանց համար կոնսուազրու-
թիւն, որ է ըսկել աթոռապատկան զիւղե-
րու տուրքերուն և յարաքերութեանց մասին
կոնսոններ (ՕՏ. ԱՊԲ. 585 և ՕՏ. ԲԻԶ. 2713-
2714): Այդ նախատեսեալ կոնսուազրութիւն-
ները պէտք էր որ կայսերական հաստատու-
թեամբ օրէնքի կարգ անցնէին: սակայն
մինչեւ այս տաճն հոգեւոր չէր զործերը առ-
կախ թողուէ, ուստի մասնաւոր կանոններ
սկսան հրամատակուիլ փոխարքայութեան
հեղինակութեամբ: Առաջինը եղաւ եկեղե-
ցական գոյքերու և հոգեւոր զպրցներու
և վոնքադրատկան կալուածներու մատա-
կարարութեան հրահանգը, որուն մէջ ըն-
դունուած է ծխականներու ընդհանուր ժո-
ղովի զրութիւնը, որ հոգեւորագութիւններ
պիտի ընտրէ, որոնք պիտի զործեն թեմա-
կալի հաստատութեամբ և զիսաւորութեամբ:
միայն զպրցնոցներու հոգեւորագութիւն-
ները կաթողիկոսէ պիտի հաստատուին (ՕՏ.
ԱՊԲ. 788-790), Այդ հրամանին համաձայն
երբիւան կաթողիկոս սեպական 16'ին
չըջարերական կոնդակ մը յդեց Կովկասի

թեմակառ տուաջնորդներուն թէ ի՞նչ ձեւով պիտի կատարուին ընտրութիւնները, և ի՞նչ են հոգաբարձութիւններուն զործերը և թեմակայներուն իրաւունքները (Օ5. ԱՐԲ. 863-864): Յատակ հրահանգ մըն ալ հրատարակեց վախտաքայն նոյնեմբեր 4'ին թէ ի՞նչ ձեւակերպութիւններ և պայմաններ պիտի զործագրուին գրաւեալ սիմվականութիւնները վերագրաձնելու զործողութեանց մէջ, մանրամասնելով բոլոր նախատեսելի զլաւոր պարուղներ, և իւրաքանչւրին պէտք եղած բացատրութիւնները աւելցնելով (Օ5. ԱՐԲ. 1045-1051): Այսպէս հետզհետէ օրինական և կանոնաւոր ձև կ'ըստանուին հոգեւորական և կրօնական դորձոց խանգարուած կարգերը, զի թէպէտ 1903'ւ 1905 երկամհային մէջ կովկասի կառավարչակառութիւնը ջանացած էր իւր յըզացոծ դրութիւնը օրինաւոր իրականութեան վերածել, և կովկասարնակ հայութիւնն ալ մինչեւ տատիճանն մը համակերպութեան բանագուած էր, սակայն երկու կովկարն ալ չէին կամեցած վախտագարձ համերաշխութեան յանդիլ, տանց որոյ անհնար էր որեւ խոզադ կոցութիւն դոյցանել: Խուսահայոց եկեղեցական կարուածներուն վերսրբեալ տեղեկութիւնները վակելու տաթիւհարկ կը տեսնենք յահանայեաց ակնարկ մը նետել զործերու կապակցութեան, և պատճառին ու արգիւնքին յարորերութեանց վրայ: Երբոր կայսերական հրամանագիրն ալ կ'ընդունի 1903'ի կարգագրութեան թերի և վեսասարեր եղած ըլլալը, երբոր սուսական հանրային կարծիքը և իրեն թարգման կանգնող լրագրութիւնը յայսանապէս կը պահարակէ Պէտքէնոն ուղղութիւնը և Դալբիցինեան զործունելութիւնը, երբոր կը Պոլոյ ու սական դեսպանութիւնն ալ պատրիարքին հնա պաշտօնական խօսակցութեանց մէջ համորձակ կը մեղագրէ բոլոր եղածները, մեզի ալ ներեալ կը սեպենք անկուշկանգ կերպով եղրակացնել, թէ ապօքէն և անկանոն գործեր իրենց մէջ կը պարունակեն իրենց անյանց վայսակութիւնը և իրենց կը պարտի լրացարդութիւնը վախճանանը: Ասսոր հնա պաշտօնական խօսակցութեանց մէջ զանուած զէնքերուն և հրանիւթներուն համար հարփերու որներու ձերբակալուիլը, և Աթենքի մատուին մէջ գտնուած հըրանիւթներու համար բաւական Հայերու հեղենական դատարանին մատանուիլը, և յուրիս 5'ին Արիկ Ռւնճեան բարերարին դաւանութեամբ սպանուիլը (ՆՄԿ.):